

Սմբաս Բիւրաս
Եմբագրութիւն «Փիիւնիկ», Ի
Աղեփսանդրիա



S. Burat
Rédaction «PUNIG»
Alexandrie

ԵԳԻՊՏՈՍ

Ղր.՝
ՏԱՐԵԿԱՆ... 45
ՎԵՑԱՄՍԵԱՑ 25

ԲԱԺՆԵԳԻՆԸ
ԿԱՆՆԻԿ Է
Ձեռագիր ԵՏ՝ չ' դար-
ձուի

ՓԻԻՆԻԿ

Կը ծախուի ՄԷԿ դրուօ ողչի

ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

ԱԶԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԱՐՏԱՍԱՅՍԱՆ

Յր.
ՏԱՐԵԿԱՆ... 15
ՎԵՑԱՄՍԵԱՑ 8

ԿՈՎԿԱՍ
ՏԱՐԵԿԱՆ ԲՊԼ. 6
Ազդեր կ'ընդուն-
ուին մասնաւոր
պայմաններով.

Գ. ՏԱՐԻ

14 ՕԿՏՈՍՏՈՍ 1902

ԹԻԻ 9

ԵՐԿՈՒ ԵՐԿՍԵՌՆԵՐԸ

Կ Ա Ս

ՊՕՂՈՍԵԱՆՆ ՈՒ ԳԱԼՍՏԵԱՆԸ

Այո՛, մինչև ցարդ ո՛ր և է բարե-
րար արդիւնք չը տուին մամուլին
քննադատութիւնները, սրովհետև ան-
կախ, անկաշառ ու անողոք խմբագրու-
թեան մը քովը կամ տակը՝ կախուա-
ծը, կաշառուածը, չորսքորթը կը պառ-
կի, հայ մամուլին արատը, փողոց, սըր-
ճարան ու դինետուն բուրոյ թերթը,
որ ամենապարզ իրողութիւններ խե-
ղաթիւրելու համար միայն կը հրա-
տարակուի: Ժողովուրդնիս, դեռ ո՛չ
բոլորովին դատող ու գնահատող, կը
մտլորի յաճախ ու կը շուարի Երբեմն,
ու յետոյ, կը գայթակղի: Միջավայրը
թունաւորուած է ատենէ մ'ի վեր տե-
սակ մը կանաչ դուռններէ, որոնք
մութին մէջ կը սողան ու լորձուքնին
աջ ու ձախ կը թափեն: Այդ կարգի
անասնիկներուն թիւը կ'աճի դժբաղ-
դաբաշ, կլիման ու հողը հաշտ գտնե-
լով:

Սակայն մենք պէ՛տք է շարունա-
կենք ճամբան, փուշով ու փոշիով, քա-
րով ու ցեխով ծածկուած ճամբան, որ կը
վերջաւորի դաշարագեղ դրախտներով:
Մենք գործ չ'ունինք անոնց հետ, ու-
րոնց անհատական շահերէ կուրցած են
փոս աչքերը. մեր պաշտօնն է դիմակ-
ները պատուել հացկատակներուն, ու-
րոնք, մենաշնորհեալ հանքերու պէս
վարժուած են շահագործելու ազգային
հաստատութիւնները, կրթական թէ
կրօնային: Հետեաբար, ծայրելով ա-
մեն խուժ ու քարընդոտ, առանց ըն-
կրկելու ո՛ր և է կնճիռի առջև, ան-
վերապահօրէն վե՛ր առնենք քողը, որ
կը ծածկէ մերկութիւնը մէկէ՛ աւելի
ձրիակերներու. պատուե՛նք այդ քողը,
պարզե՛նք իրականութիւնը. բարձր
ձայնով պատմե՛նք թէ քանի՛ քանի
մատաղ տաղանդներ ողջ ողջ կը թաղ-
ուին տաշուէ տարի այն գերեզմանա-
տանը, որ Պօղոսեան վարժարան կը
կոչուի:

Անցած տարուան Յուլիս ու Օգոս-
տոս ամիսները ծայրէ ի ծայր զբաղե-
ցանք այդ դժբաղդ հաստատութեան

վիճակովը, հրապարակեցինք անոր
 գաղտնիքը, թուեցինք մէկէ աւելի
 ուսուցիչներու վնասակար ընթացքը,
 զգացուցինք անոնցմէ ոմանց յոռի ու-
 սուցումն ու հիմնական յեղաշրջումի մը
 պէտքը. սակայն ի զո՛ւր, յոռիէն յո-
 ռեգոյն տանող ճամբայ մը բռնուե-
 ցաւ ու բերուեցաւ երկսեռ վարժա-
 րանը դրուեցաւ այսօրուան անել բա-
 լիղին մէջ:

Մե՛ր պատ. ընթերցողներուն ճիշդ
 ու յտակ գաղափար մը տալու համար
 այս տարուան հարցաքննութեանց վը-
 րայ, պիտի խնդրէինք որ հաճէին ան-
 գամ մ'ալ աչքէ անցընել 1901ի Փիւ-
 նիկին 7, 8, 9, 10, 13, 14 և 13 թի-
 ւերը, որոնցմէջ մանրամասնօրէն նկա-
 րագրուած է վարժարանին մտաւորա-
 կան ու բարոյական կացութիւնը նոյն
 տարուան ընթացքին մէջ, զոր եթէ
 բազդատութեան դնենք այս տարուա-
 նին հետ, աւելի՛ յոռի ու յետադէմ
 պիտի գտնենք այն պարզ ու հզօր
 պատճառով որ այս տարի բառապսակ
 Ասքանազի մ'ու լալկան Վարպետ տու-
 տուի մը վրայ բերին դրին անկաշելի
 տնօրէն մը, որ իր կարգին, վարքու բար-
 քերը պիտի ազնուացնէր մեր երկսեռ
 սերնդին, իր օրինակելի՛ բարոյա-
 կանովը:

Փափուկ ականջները խոցոտելէ
 զգուշանալով է որ զանց կ'ընենք հոս
 ցուցադրել արտառոց ածականները,
 որոնք մեր տէրեպէյի տնօրէնին շղուտ
 բերնէն կը թափթփին անխտիր, երկու
 սեռէ աշակերտներուն ալ հասցէին,
 զե՛վզէ՛ք, Ըիսսա՛, իի՛ս, ս. . . սի՛ր եւն.
 օրուան հասարակ ժամերուն, դասա-
 րաններուն մէջ ու սրահներուն: Անի-
 բաւ չըլլալու համար աւելցնենք թէ՛
 այդ ճիւղին մէջ մեր գրաբարի ուսու-
 ցիչը մերթ ընդ մերթ կը գերազանցէ
 իր տնօրէնը, նախնեաց խոշոր բառե-
 րուն հետ խառնելով նաև արդեաց
 թրքասացութիւններ. էտպսիզ, հեր-

կէլէ՛. ևն:

Ու անպէտ գրաբարին այդ պի-
 տանի ուսուցիչն է որ, բարեխօս հը-
 րեշտակի մը թեւերուն տակ կը շարու-
 նակէ իր դրոց ու բրոցը նորերուն ա-
 ւանդ թողուլ, շարչրկելով անոնց ը-
 շե՛ղը. . . :

Բնականաբար, դիւրին է հետեւ-
 ցընել թէ՛ ի՛նչ կ'ըլլայ այդպիսի ա-
 պիկար պաշտպանեալներու խնամքին
 թողուած մանկութիւնը կամ պատանե-
 կութիւնը:

Հոն, Պօղոսեան յարկին տակ, չը
 կայ ո՛չ կարգ, ո՛չ վա՛րք, ո՛չ կրթու-
 թիւն, ո՛չ ալ դաստիարակութիւն:
 Կատակերդութիւն մըն է կ'երթայ:

Ուրիշ կերպով չէ՛ր ըլլար արդէն:
 Վարձկան փոլարներ թո՛ղ բռնեն, մու-
 նետիկ կանչել թո՛ղ տան, Ռաօլէ Յը-
 րէններուն հանդէսը ձրի վայելողին ձրի
 եղանակին հետ բան մըն ալ թող հրամ-
 ցընեն արշալոյսին կանուխ դուրս ելնող-
 ներուն. թո՛ղ այդ վարձկանները պա-
 տըռտուին ու պատուտուին, բերաննին
 մինչև ականջներնին թո՛ղ հասցընեն,
 թմբուկով ու դէ՛ժով, փաղցնելը թո՛ղ
 թափօր դառնան, ծափահարեն, փառքի
 զենիթը հանեն մե՛ր Պօղոսեանը. պա-
 րա՛պ բան է, աւզէասեան ախոռ մ'է
 սակայն, մաքրել պէտք է զայն ու
 մաքրել ներսէն ու դրսէն. աւելել դուրս
 թափել պէտք է բոլորը, ոստայններ
 կապած, բոյներ շինած են հոն, սրբել
 պէտք է զանոնք:

Ալ հերի՛ք է. ամօ՛թ է մեզի, վերջ
 մը դնել պէտք է կացութեանը, զոր
 ատենօք ստեղծեց ստեղծողը, ու հի-
 մայ, կը նայի ի՛ր արարածներուն վրայ
 ու կը խնդայ. . . :

Բարեբաղդօրէն, դժբաղդ Պօղոս-
 եանին նորակալմ հոգաբարձութեան
 Պատ. անդամները մօտէն քննեցին ու
 հասկըցան ինչ որ դարձած է ու կը
 դառնայ հոն. տեսան խեղճութիւնը,
 տեսան խաղբութիւնը հարցաքննու-

թեանց: Ու հիմայ կ'իմանանք թէ ազնիւ ձգտումներէ մղուած, ատենէ մ'ի վեր կը խորհին բարեկարգութեան միջոցներուն վրայ նոյն վարժարանին, որ իրենց հոգածութեան յանձնուած է և ուրկէ կ'սպասենք որ տարուէ տարի պատրաստուած ու դաստիարակուած պատանիներու երամ մը դուրս գայ:

Պատ. Հոգաբարձութեան ջանքերը — որոնց բնութեանն և ուղղութեանը պիտի ջանանք տեղեկանալ հետզհետէ պէտք է ձգտին, ամեն բանէ առաջ, երկսեռ վարժարանը զատելու, նկատի ունենալով ծնողներէ և կրթասէր ազգայիններու կողմէ տեղացած քանի մը տասնեակ զիտողագիրներն ու գանգատները, որոնք առհասարակ տխուր ու սև գոյններու տակ կը պատկերացնեն ուսանողութեան բարոյական մակարդակը, ինչպէս և ուսուցչական մարմինին մէջ բոյն դրած անհամբարաշխ ու իրերատեսաց ոգին: —

(Շարունակելի)

Ս. ԱՌԱՋՆՈՐԴԻՆ ԱՌՋԵՒ

Ա.Նուրս 10 ին. Կիրակի օրը, պատարակեալ վերջը, ժողովուրդը բնակ խոնած՝ սափ սափ կը խօսակցեալ օրուան նիւթին, ԱՐՁՈՒՄԱՆ ՏԵՄԻՐԵԱՆԻ կրօնափոխութեան վրայ: Երկակներէն Տեափ Ա. Ազարեան, Ա. Պոյաճեան, Ս. Գալպեան, Զ. Ֆեկերճեան, Վ. Պօրկեան, Ս. Թերգեան, վերելան Ս. Առաջնորդին առջեւ, կարգով Ս. աջը համբարեղով՝ նստան Եւրիկ Սրբազնութեան հրամանաւ:

Ու հետեւեալ խօսակցութիւնը սկսաւ.

Ազարեան. — Սրբազան Հայր, ներքե՛ք, փոքրիկ խնդիր մ'ունինք, եթէ հաճիք մը տիկ ընել . . .

Առաջնորդ. — Ի՞նչ կայ նայի՛մ, ըսէ՛ք.

Ազարեան. — Անցեալներս Արղուման անուն Պրուսացի Հայ մը կառավարութեան ներկայացրեալ է մահմետական ըլլալու համար, և կառավարութիւնն ըստ օրինաց իմաց տուեր է ձեզ որպէսզի քահանայ մը զրկէք, և հրամանքնիդ փոխանակ քահանայի՛ Չալուչին օգնականը զրկեր էք.

արդ եթէ կարելի է, սա խնդիրը լուսարանէք: Մենք չենք ցաւիր Արղումանի մը կորուստին, այլ Առաջնորդարանին բռնած ընթացքին վրայ:

Առաջնորդ. — Մենք այդ մարդը շատ լաւ կը ճանչնանք, արդէն Պրուսա տաճկցած (1) էր, գարշելի թիւ մարդուն մէկն է, հոս եկաւ Աղքատախնամէն 15 ոսկի ուղեց որ Մարտիլիա երթայ, և երբ Աղքատախնամը մերժեց և Աղգ. սնտուկէն միայն կէս ոսկի տուաւ, գնաց տաճկնալ ուղեց:

Պոյաճեան. — Բայց քանի որ կառավարութիւնը ձեզ իմաց տուեր է, ըսել է թէ անոր Հայ ըլլալն ընդունել է, և յետոյ կարելի՞ բան է արդեօք որ տաճկցած մէկը, ինչպէս որ կը պնդէք, նորէն տաճկացնեն. բայց, քանի որ հրամանքնիդ գիտէք անոր տաճիկ ըլլալը, ինչո՞ւ Հայ աղքատներու յատկացեալ սնտուկէն կէս ոսկի տալ տուիք անոր. ըսել է թէ՛ առանց հարցուփորձի՛ եկողին ստակ կը տրուի, և անդին ճշմարտ հայ ազգին զաւակները անօթի կը մնան...:

Առաջնորդ. — Ի՞նչ ըսել կուզէք, բան մըն է եղաւ. Փի՛նիկի գրածներուն կը նայիք, հոս . . .

Պ. ՊՅԱՃԵԱՆ ՏԵՍԵՆՅՈՎ ՈՐ ՍՐԲ. Առաջնորդը նիւթէն դուրս կը շեղի և աջ ու ձախ հարուածել կըսկսի, սիջաւեց.

Պոյաճեան. — Շատ լաւ, բան մըն է եղաւ, բայց կարելի չէ՞ այդ մարդը կերպով մը քաղաքէս հեռացնել քանի որ փողոցներու և սրճարաններու մէջ քանի մը տաճիկ ընկերներով հայ երիտասարդներու առջեւ հայ ազգին կը հայնոյէ. օր մը կըրնան կատղիլ և սասաթիկ մեծ խնդիր կարող է դուրս գալ և կարգ մը երիտասարդներու կորստեան պատճառ ըլլալ. ապահով ենք որ եթէ ազգու կերպով գիտէք, կառավարութիւնը նկատի կ'առնու և պէտք եղած միջոցները ի գործ կը դնէ:

Առաջնորդ. — Ատանկ բան չեմ կրնար ընել ևս, նոյն իսկ Հայ մ'ալ չեմ կարող աքտրել (2), վասնզի իմ խօսքս տէրութեան քով կարեւորութիւն չ'ունի:

(1) Բան մը որ վեր Պրուսացի Հայերէն ոչ միև միևնչեւ ցարդ իմացած եր:

(2) Սակայն վեր Սրբ. Առաջնորդը չե՞ որ անցեալները կառավարութեան զիմեց որպէսզի փախախ պատուարժան Ազգայիններէն հիկն առաջնակարգ անձնաւորութիւններ աստրել սայ, թե՛ն, դժբաղդաբար չը յաջողեցաւ...:

Գալագեան. — Պր. Պոյաճեան, ի՞նչ կուզես որ ընէ, քանի որ կառավարութիւնը հայ ճանչնալով Արզումանը, 3—4 անգամ իմաց առեր է հրաւիրեր է եւ Սրբ. Առաջնորդնիս անհոգ ու անտարբեր կեցեր է, հիմայ ի՞նչպէս կ'ուզես որ կառավարութեան դիմէ եւ հեռացնել տայ:

Առաջնորդ. — Է՛յ երկայն ըրիք, ի՞նչ ըսել կ'ուզէք, չէք հաւնիրնէ բաներնուդ պատգէք, զիս դո՛ւրս նետել կ'ուզէք. անցեալ օր ալ Տաւուսեանը թեւէս բռնել դուրս նետել կ'ուզէր, զիս այնչափ անկարող կը կարծէր, ինքզինքը Սասունի լեռնե՞րը կարծեց

Պոյաճեան. — Խնդրեմ, Սրբազան Հայր, ի՞նչ ըրած ունիք հո՞ս, մեր ո՞՞ք իրաւունքը պաշտպանած էք որ այսօր, Սասունի հերոս Տամատեանի մը չէք հաւնիր . . .

Գալագեան. — Ներեցէ՛ք, Սրբազան Հայր խնդիրէն դուրս կ'ելլէք, մենք հոս եկած ենք

Առաջնորդ. — Է՛յ շատ ըրիք, ժամա՛ ահ մը Սահմանադրութեան պոչը բռնած կեցէ՛ք, հիմակ ալ այս խնդր՞ը մէջտեղ հանեցիք. դո՛ւք ալ գետնին տակը անցնիք, Սահմանադրութիւնն ալ, քոնի՞՞ բարա կ'առնեմ Ձեր Սահմանադրութիւնը, զլուխնո՛ւզ անցնի Սահմանադրութիւննի՛դ ալ, օրէնքնի՛դ ալ

Գալագեան. — Ներեցէք, Սրբազան Հայր, Դուք չէ՞իք այս երկրիս մէջ Սահմանադրութիւնը եկեղեցւոյն բեմին վրայէն քարոզողը . . .

Առաջնորդ. — Այո՛, ես էի

Գալագեան. — Դուք չէի՞ք Սահմանադրական օրէնքով ընարուող թաղականները վաւերացնողը. ու յետոյ . . . Դուք չէի՞ք

Առաջնորդ. — Այո՛, ես էի, ի՞նչ ըսել կ'ուզէք.

Գալագեան. — Հիմակ ի՞նչ երեսով կըսէք «Սահմանադրութիւնը գրուիսիդ ուտէ, քանի՞ բարա կ'ուտամ Սահմանադրութեան եւայլն» ըսել է թէ Դո՛ւք, Ձեր ստորագրութեանը տէրը չէք, Ձեր ստորագրութիւնը յարգ չ'ունի, եւ կեղծ է ձեր քարոզը:

Առաջնորդ. — (Առաջնորդին ջիղերը ուսկըսել, ձեռքերը գրասեղանին ու ուսկերը գետնին զարնելով մեկ կողմսն կը պոռար, միւս կողմսն զանգապը կը հեցեցնէր) Չա՛վուչը կանչեցէ՛ք շո՛ւտ, շո՛ւտ, չա՛վուչը կանչեցէ՛ք, դուրս հանեցէ՛ք սա աներեսը: Երկու ծառաները ներս մտան, որոնք

արդէն դռան ետեւէն, մտիկ կ'ընէին բայց քայլ մ'իսկ առաջ չկարողացան գալ, իրենք ալ գիտէին թէ Սրբ. Առաջնորդը բուրովին անիրաւ էր:

Պոյաճեան. — Ի՞նչու կը բարկանաք, Սրբազան, քիչ մը հանդարտ խօսեցէ՛ք.

Առաջնորդ. — Ձե՞ս տեսներ ի՞նչ բաներ կ'ըսէ:

Պոյաճեան. — Դո՛ւք էք այս խօսակցութեանց տեղի տուողը, եւ ի՞նչ կը կարծէք, Չա՛վուչը կանչելով զմեզ վախցնել կը կարծէք.

Առաջնորդ. — Ի՞նչ, ինքզինքդ Սասունի լեռնե՞րը կարծեցիր, մենք մեր գիտցածին պէս կ'ընենք, եւ ուրիշ բան ալ մտիկ չենք ընել:

Պոյաճեան. — Ի՞նչ, Դուք Սասունի հերոսներուն ու լեռներուն չէ՞ք հաւնիր, անոնց անունը Ձեր բերանը առնելու արժանի իսկ չէք. Ձեզ նման ապիկար ու բարոյապէս մեռած հազար հազար Առաջնորդներ անոնց մէկ եղունգն իսկ չ'են արժեր . . .

Ազարեան. — Տղա՛ք, պարապ տեղը մենք հոս շունչ կ'սպառենք. մեր Առաջնորդը ցընդե՛ր է, ըսածը չի՛ գիտեր, քալեցէք երթանք:

Ու այսպէս կը վերջանայ Օգոստոս 10ի կատակերգութիւնը:

Լ Ա Յ Կ Ա Կ Ա Ն Լ Ա Ր Յ Ը

Այս շաբթուան թղթաբերով հասած Բրօ Արմենիսի Յուլիս 23 ի թիւը կրկնաժառանգ էր հետեւեալ ճոխ բովանդակութեամբ.

Պրիւսէլի համաժողովին մէջ բուհարկուած որոշմագիրը. Կիսամետակը (Բիէն Բիյեար). — Նամակներ Պիթլիսէն ու Սլերդէն. — Պրիւսէլի համաժողովին ուղղեալ նամակներու հեռագրեր (տէլեթուռնէլ աը Գօնսդան, աը Վիւլար, Ժ. Գլեմանսօ, Ճ. Պրայս, Սդիվինսըն, Էն). — Հայ գաղութներէն հեռագրեր. — Հայասէր համաժողովը (Ֆէրնան Սարնէզ). — Վաւերաթղթեր. Ուղերձ Հայկական Յե-

ղափոխական Միութեան . — Տիգրան Երկաթի յիշատակին:»

Տարածերթօրէն մեր գատովըչա. հազրդգուող Բրօ Արմէնիաին այս թիւը մանաւանդ կը յանձնարարենք կարգաւ մեր ընթերցողներէն ամեն անոնց, որոնք ֆրանսերէն կը հասկընան: Ու կը փութանք հրատարակել թարգմանութիւնը քանի մը կարևոր գրութեանց միայն, որոնցմէ են Տ. Փ. ՏՅ Բրէսանսէի ճառը (որուն հրատարակութիւնն արդէն խոստացած էինք նախորդով): Հայկ. Յեղ. Միութեան ողորդը եւ «Տիգրան Երկաթի յիշատակին»:

Ճ. Փ. Բրէսանսէյի ճառը.

Տիկնայք, Տեա՛րք,

Այսօր մեզ համախմբող հարցին միջազգային գեանին վրայ պիտի խօսիմ ձեզի մասնաւորապէս: Մեր հիմայ քուէարկելիք որոշումէն կը հասկցուի թէ՛ մենք կարևորութիւն կուտանք Հայաստանի մէջ ֆրանսական և ռուսական հիւպատոսարանաց շտնալուին: Այս վերջին միջոցը վայրկենական եղած չէ՛, այլ արդիւնքը՝ Տ. Տէլգասէի քով գացող երեսփոխաններուն դիմումներուն, որոնք իրենց խնդրանքը հիմնեցին այն բանին վրայ թէ՛ Փոքր-Ասիոյ շարքերը մինչև ցայսօր վկաներ ունեցած չէին. նախարարը զրկեց հիւպատոսական գործակալներ ու ասկէ զաս խոստացաւ խռովութեանց վառարանները չըլապատել Կօտիով մը կայաններու, որոնք պիտի հսկեն հրաբխուտ գաւառին վրայ ու ձեռք պիտի առնեն հարկաւոր միջոցները՝ կեցընելու համար պայթումները: — Մեկի կը խնդրենք որ բոլոր սերտքիւնները բարեհաճին հասնանման միջոցներ ձեռք առնել:

Եւրոպական ազգերը բացորոշ յանձնառութիւններով կապած էին Սուլթանը Պէրլինի դաշնագրին: Յանկարծ բոլոր դիւանագիտութիւնները գաղբեցան հսկելէ անոր գործադրու-

թեանը: Այն ատեն հարցուեցաւ այս յետոս դարձին պատճառները: Պատասխանուեցաւ թէ՛ հայեացներու հակոտնէութեան հանդէպ որ զանազան կսուավարութեանց միջև գոյացած էր, պէտք էր շատանալ գործողութեան ամենափոքր ձևով (minimum). գոհացուեցաւ մասնակի բողոքներով ու միջոցներով, մարդասիրութիւն գործուեցաւ և ո՛չ դիւանագիտութիւն: Պէտք է վերսկսել ազդու գործողութիւն մը:

Մենք կարող եղանք ըսելու Տ. նախարար Տէլգասէի. «Տէրութիւնները խիստ այլանդակ բան մը ըրին: Անոնք իսկոյն լքին Պէրլինի դաշնագրին իրաւագիտական գետինը: Շատ դիւրին է Սուլթանին՝ ինքիւրեն ըսել. «Բանի որ ինէ չը պահանջուիր ոչ միև երաշխաւորութիւններէն, զորս ես յանձն առի սալու, ի՛նչ գործս չէ՛ անունց գործադրութիւնը թելադրել:»

Սուլթանը, յայտնի է արդէն, այն ատեն միայն խօսք կը հասկնայ երբ որ պնդօրէն կը պահանջենք իրմէ նիւթական կամ բարոյական պարտքեր ու երբ ոչ նաւատորմի զրահաւորներով կուգենք անոնց վճարումը, այդ պարագային կը հնազանդի: Բայց մարդկութեան ու ազատութեան վրայ պարզ բողոքները լոկ բառեր են իրեն համար, զորս չը հասկնար, գործել պէտք է:

Մեզի դէմ բանաձևեցին քանի մ'առարկութիւններ զորս պէտք է հերքել: Մեզի դիւրաւ կ'ըսեն. «Ինք բարի դիտումներ ունիք, բայց գործնական եղէ՛ք ու մի՛ խնդրէք ուրիշ բան եթէ ո՛չ՝ յաւելուածական նոր հիւպատոսներու առաքումը. ձեզի անկարելի է ցանկալ տեսնել ուրիշ բանի իրականացումը:» Է՛հ ուրեմն, մենք կ'ըմբռնենք գործադրել տալ Պէրլինի դաշնագիրը, և ձեռք բերել, Հայաստանի մէջ, ամբողջական բարեկրօն գում մը, շնորհիւ այն իրաւագիտա-

կան մուրհակին որ մեր ձեռքին մէջ է։ Ուրիշ տեսակ առարկութիւն մ'ալ Անկարելի է կրթնիլ եւրոպական համաձայնութեան, քանի որ կը տեսնէք թէ համաձայնութիւնը չը կայ հոն ու ինչպիսի կը չարչարուի անել ճախճախուտի մը մէջ։

Իրաւ է թէ՛ վերջին թրքայունական պատերազմին ատեն, 1896ին, եւրոպական համաձայնութիւնը չը քաշեց իրաւ է թէ՛ Ալմանիոյ կայսրութիւնն ու Աւստրիայինը՝ ձեռնպահ մնացին այս գործին մէջ ի նպաստ Թուրքիոյ ու մերժեցին միջամտել ի նպաստ խաղաղութեան։

Բայց այն ատեն, ի՞նչ ըրին միւս ազգերը։ Սահմանէն անդին անցան ու շարունակեցին իրենց գործը։ Ֆրանսան, Ռուսիան, Իտալիան, Անգլիան շարունակեցին գործել ու ձեռք բերին Կրետէի ինքնավարութիւնը, թրքական յաղթութեանց վաղորդայնին։

Լաւ կը տեսնուի որ ազգի մը վատացումը չը քաշեր ձգեր ետեւէն միւսներունները։

Պէտք է գործել անյապաղ, չը կայ ո՛չ մի յարգի պատճառ, վճռականապէս չը դադրեցնելու համար խժդժութիւնները, որոնք կ'արիւնոտեն Հայաստանը։ (Մարիեր)։

ՏԻԳՐԱՆ ԵՐԿԱԹԻ ՅԻՇԱՏԱԿԻՆ

(Կարապետ Պէյ Պիէզիբի)

«Եզրիպտական Ալեքսանդրիոյ մէջ երեցոյ փիլիսոփայ (Phénix) հայկական հանդէսը, ժամանակէ մ'ի վեր կեանքը կը հրատարակէ երիտասարդ հերոսին, որ այնքան կանուխ մեռաւ 1899 ի Դեկտ. 1 ին, մինչդեռ իր գժբաղդ ազգը մեծաւեծ յոյսեր դրած էր իր վրայ մայր-հայրենիքի ճակատագրին համար։

Այս դրուածքը կը պարտինք գրչին Տ. Ս. Բիւրատի, բանաստեղծ ու հրա-

պարակագիր, բնիկ Ձեթունցի (Կիլիկիա) և հիմնադիր փիլիսոփային։ Բանաստեղծութիւն մը և Յառաջաբան մը, որոնք կը պատմեն թէ ի՞նչ հանճար էր Տիգրան Երկաթ, կը նախորդեն կենսագրութեանը, ուր Տ. Ս. Բիւրատ կը գծէ մանկութիւնը Կարապետ Պէյ Պիէզիբիի, իր դպրոցական կեանքը Արգէոյլ (Սեն)ի դպրոցը, իր գրական փայլուն նախափորձերը բարիզեան մեծ թերթերուն մէջ, իր տառապանքները, իր վերադարձը Կ. Պոլիս, ազգին համար իր սէրը։ Տ. Ս. Բիւրատ կը խօսի յետոյ Տիգրան Երկաթի քաղաքական գերին վրայ որուն հակիրճ ամփոփումը կուտանք։» Բրո Արմէնիա։

Այս ամփոփումը Բրո Արմէնիայի մէջ գրուած է 2 1/2 խիտ սիւնակներ, որոնց թարգմանութիւնը գժբաղդաբար պիտի չը կրնանք տալ այս անձուկ էջերու մէջ, հակառակ շատերու կողմէ յայտնուած բաղձանքին։

ՔՐՈՆԻԿ



— ՅՐԱՆՍԱՆ, ԱՆԳԼԻԱՆ ՈՒ ՌՈՒՍԻԱՆ Մուշ զրկեցին իւրաքանչիւրը մի հիւպատոս, Հայաստանի կացութեան վրայ վաւերական տեղեկագրեր ձեռք բերելու համար։ Տեղն է աւելցնելու թէ՛ Ռուսիոյ և Աւստրիա-Հունգարիոյ յանձնարարութեամբը՝ Սուլթանը վերջերս նախարարական յանձնախումբը կազմեց տեղեկագիր մը շինելու համար Մակեդոնիոյ կացութեան ու բարենորոգումներու առաջարկներուն վրայ, բնակչութեանց խաղաղութիւնը ապահովելու համար։

— ԱՍՏՈՒԾՈՅ ՇՈՒՔԸ. Ն. Կ. Վ. Ապտիւլ-Համիդ իրօք արժանի է Աստուծոյ Շուքի անուանը, զոր իրեն կուտան օսմանցիները. անի անխոնջ նախանախնայութեամբ մ'ու ոչորումութեամբ

կը հսկէ նոյնիսկ հայհոյիչ արարած-
ներուն, ոչոնք կասկածեցան իր բա-
րութեանը վրայ:

Տ. Շանկօֆ, խմբագրապետ Սօ-
ֆիայի Վեչարևա Բօսդա (Երեկոյեան
Սուրհանդակ)ին, յանդգնած էր իր
թերթին մէջ դնելու Սուլթանին դէմ
ամբաստանագիր մը. ան յիշեցուցած
էր ընտանեկան ու հանրային ոճիրներն
այս խիստ գթոտ վեհապետին, որ օ-
րինաւոր խալիֆա իր հարազատ եղբօ-
րը Մուրատի բանտապանն է, Բարե-
նորոգող Միտհատ Բաշային խոշտան-
գիչն ու դահիճը, Մարդասպանը մար-
դասպանաց՝ իր ծախքով, Կեղեքիչը
Թուրքերու, Պուլկարներու, Սերպե-
րու, Հելլէներու, Վլաքներու, Եէ-
զիտիներու, Տիւրքիներու, Քիւրտերու,
Արաբներու, Ալբաններու, Զարդուր
երեք հարիւր հաշար Հայերու: Դրան
կամ Պուլկարիոյ Կայսերական Բարձր-
Քննիչին բողոքին վրայ, Տ. Շանկօֆ
դատի քաջուած է վեհապետական
անձ մը նախատած ըլլալով. սակայն
Ն. Կ. Վ. հաճեր է յիշել թէ Ինք՝
գրեթէ երկու տարի առաջ՝ անանկ դատ
մը բացած էր Տ. Իւրպէն Կօհիյեի, Շարյ
Մաշաթի եւ Բիէն Քիյեարի դէմ,
բայց յետոյ ստիպուած էր ետ քաշել
դատը: Հիմակ չուզելով անհանգիստ
ընել Տ. Շանկօֆը, վեհանձնօրէն հրա-
մայած է նոր սպաննութիւններ ի Մա-
կեդոնիս և հրաւիրած է իր անկեղծ
ծառաները՝ քաղելու անվիճելի փաս-
տեր իրենց նախճիրներէն:

Ու Աստուծոյ շուքին խնամքով
և Սօֆիայի մեր եզբայրակիցն արդա-
րացնելու համար է որ Մանասթրի
նստիկանները լուսանկարնին հանել
տուած են չորս կտրուած դուրսներու
մակեդոնական յաղթարօշով մը (տես
Նուվէյլ Իլլիւստրէ, 24 Յուլիս և Բրօ
Արմէնիս 25 Յուլիս): Հերիք է այդ լու-
սանկարը միայն ներկայել պուլկար
դատաւորին որ Տ. Շանկօֆը պիտի ան-

տարակոյս անպարա հանէ:

— Այս երեքշաբթի Մարտէյլի ճամբով
Ալեքսանդրիա ժամանեց Տ. Սուրէն
էթմէքճեան որդի Տ. Սահակ էթմէք-
ճեանի որ ծանօթ է իբր ուսուցիչ և
նախկին Տնօրէն Տրապիզոնի ազգային
վարժարանին և միանգամայն Սամուէլ
Սմայսի միջնօգնութիւնի թարգմա-
նիչը:

Տ. Սուրէն էթմէքճեան երեք տա-
րի Բաշիզի մէջ հետևած է համալսա-
րանական դասախօսութեանց և պատ-
րաստուած է մասնաւորապէս իբրև ու-
սուցիչ պատմութեան, աշխարհագրու-
եան և ֆրանսերէնի: Յարգելի երիտա-
սաշղը քանի մը օր պիտի մնայ Ալեք-
սանդրիա և յետոյ պիտի մեկնի ի Գա-
հրէ:

— ԱՄԵՆ. ՕՐՄԱՆԵՍԱՆ ՊԱՏՈՒԱՐՔը
հրատարած է առարկելով թէ՛ Դուռը
կարևորութիւն չը տար իր թագիրնե-
րուն և թէ՛ ինք անել կացութեան մը
մատնուած է կարգ մը դժուարու-
թեանց առջև:

— ՏԻԱՐ ՅԱԿՈՒՄ ՄԱՂԱՔԵԱՆԻ դէմ
խմբագրութեանս ուղղեալ ծափանուն
ստորագրութեամբ գրութիւնը հրա-
տարակելէ առաջ, պարտք կը զգանք
խնդրել այդ գրութիւնը զրկողէն որ
հաճի անձամբ ներկայանալ խմբագրու-
թեանս, ինքզինք ծանօթացնէ և հար-
կաւոր բացատրութիւնները տայ մեզի:

ԳՈՂ ՄԺԴՅՈ

Գաւառական կեանքէն

Գրեց ՆՇԻԿ ԵՐԷՅ

Ընդ մամշով է այս վէպը, որ մօտերս
պիտի լոյս տեսնէ Արաֆս տպարանէն:

Բաժանորդագրուիլ փափագողները
5 զրշ. ի նամակագրօշմ կրնան զրկել
Փիւնիկի հասցէին:

ՎԵՐՁԻՆ ԱԶԴ

Արտասահմանի մեր բաժանորդներէն, հակառակ ա՛յնքան ազդերու, ա՛յնքան դիմումներու, չը ստացանք ցարդ ո՛չ մի մանսարօսք:

Յարգելով զիրենք եւ լրագրական սովորութիւնը, մենք իրենց կանոնաւորապէս զրկած ենք թերթ, զոր չ'են մերժած, այսինքն ընդունած են:

Մերժողներուն անմիջապէս դադրեցուցած ենք թերթին առաքումը, իսկ չը մերժողներուն ընտանաբար պարտաւորուած ենք կանոնաւորապէս շարունակել առաքումը:

Արդ, վերջին անգամ մըն ալ կը դիմենք մեր Պատ. բաժանորդներուն, խնդրելով որ ա՛լ հաճին վճարել պարտքերնին, իսկ եթէ մտադրած են թերթը ձրի կարգալ, գոնէ թո՛ղ ազնուութիւնն ունենան մերժելու զայն, որով ազատած կըլլան մեզ թուղթի ու թղթատարութեան բոլորովին աւելորդ ծախքերէ:

Թո՛ղ վստահ ըլլան, մենք իրենց անունները չենք հրապարակել:



Երիտասարդ մը, որ քաջ Անգլիագէտ է, պատրաստ է մասնաւոր դասեր տալ անգլերէնի, տուներու մէջ ալ, խիստ գնահացուցիչ եւ դիւրամատչելի պայմաններով:

Փափագողները դիմեն Փիւնիկի խմբագրութեան:

ՎՐԱՔՍ

Հայկական տպարանը թէ՛ Հայերէն, թէ՛ գաղղիերէն եւ թէ՛ ուրիշ լեզուներով ամեն տեսակ տպագրական գործեր կը կատարէ մեծ խնամով եւ, ինչ որ նուազ կարեւոր չէ, ԽԻՍՏ ՉԱՓՍԻՈՐ ԳԻՆԵՐՈՎ:

SALAMANDER

ՍԱԼԱՄԱՆՏԸՐ

Ապահովագրական Ընկերութիւն ընդդէմ հրդեհի.

ԱՄՍԹԵՐՏԱՄ

Դրամագլուխ 3,125,000 ֆրանկ

Ամեն կերպ Ապահովագրութիւնք կ'ընդունուին ընդդէմ հրդեհի ինչպէս նաև Ծովային, Գետային եւ Յամաքային փոխադրութեանց արկածներու դէմ:

Դիւրամատչելի գներ եւ պայմաններ

Դիմել առ Ընդհանուր Գործակալ եւ Լիազօր-Փոխանորդ

ՄԻՀՐԱՆ ԴԱԼՅԱՆԱՆ

Աղեֆասանդրիա, պոսիկ Մէնչիէ Ապուսսուսա փողոց թիւ 10

L'ALLIANCE

Լ'ԱԼԻԱՆՍ

Ծովային Ապահովագրական Ընկերութիւն.

ՊԵՐԼԻՆ

Դրամագլուխ 5,000,000 ֆրանկ